# Աղավնաձոր

Բնակչության թիվը՝ 2052

Վայոց ձոր մարզի Աղավնաձոր գյուղը գտնվում է Արփա գետի միջին հոսանքից հյուսիս տարածված Աղավնաձորի սարահարթ կոչվող տարածքի հյուսիս -արևելքում՝
Աղավնաձոր գետից արևելք :
Գյուղն ունի 545 առկա տնտեսություն՝ 2062 բնակչությամբ։
Համայնքի վարչական տարածքը 4682 հա է `466 հա վարելահողեր են, 1071 հա արոտավայր, 379.4 հա այգիներ։

Գյուղի հյուսիսային մասում իր գեղեցկությամբ աչքի է ընկնում Թեքսարի լեռնաճյուղերից Ուլգյուր գագաթը, որը ծովի մակարդակից ունի 2690 մ բարձրություն։
Գյուղն ունի հաճելի համայնապատկեր։ Բարձրությունը ծովի մակարդակից 1450-1600 մ է, իսկ կենտոնական մասում ունի 1530մ բարձրություն :

Աղավնաձորի սարավանդն ունի հնագույն հրաբխային կառուցվածք և կտրտված է բազմաթիվ փոքրիկ գետակներով ու ձորակներով։ Կլիման արտահայտված է մերձարևադարձային չոր կլիմային բնորոշ բնութագրով, այն է՝ չոր և շոգ ամառներով և խոնավ, չափավոր ցուրտ ձմեռներով։ Տեղումների քանակը տատանվում է 350-400 մմ։ Առավելագույն տեղումներ դիտվում է գարնանը՝ մայիս ամսին, որը խթանում է լեռնալանջերի ձյան հալոցքը և առաջացնում է սելավներ։ Աշունն երկարատև է և տաք, որի պայմաններում հասունանում են մրգերը, հատկապես <<Արենի>> տեսակի խաղողը։

Այսպիսի բազմաբնույթ կլիմայի պայմաններում ձևավորվել է յուրօրինակ բուսական և կենդանական աշխարհ. հատկապես աչքի է ընկնում դեղաբույսերով՝ ուղտափուշ, ուրց, գազ, մասուր, հազարատերևուկ, դանթափար, երիցուկ և այլն։ Կենդանական աշխարհը հարուստ է թռչուններով՝ կաքավ, լոր, արծիվ, սողուններով՝ թունավոր օձեր՝ գյուրզա, իժ, ինչպես նաև գիշատիչներով՝ աղվես, գայլ, շնագայլ,արջ։

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է, հիմնականում զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ։

Արևային օրերը՝ արևափայլը, մինչև 340-350 օր է կազմում, որով էլ պայմանավորված է արտադրված գյուղատնտեսական ապրանքների՝ պտղատեսակների և բանջարեղենի, բարձր որակը։
Խորհրդային տարիներին գյուղում եղել է կաթնապրանքային ֆերմա, նաև ոչխարաբուծական ֆերմաներ, ներկայումս էլ խնամվում են խոշոր և մանր եղջերավոր անասուններ։ Գյուղում այժմ գոյություն ունեն մի քանի ֆերմերային տնտեսություններ, որոնք զբաղվում են անասնապահությամբ և խաղողագործությամբ, ինչպես նաև՝ մեղվաբուծությամբ։
Արտադրվում է գինի, օղի, չիր, պանիր, բուրդ, միս, մեղր և այլն։

Գյուղում գործում է խաղողի վերամշակման երկու ձեռնարկություն, արտադրում և արտահանում է <<Լուսարև>>, <<Գեղեռն>>, <<Հարսնասար>> տեսակի որակյալ գինիներ։

Գյուղի հիմնադրումը վերագրվում է 13-րդ դարի սկզբներին։ Աղավնաձորը կոչվել է նաև Աղնաձոր, Այնազուր։ Հին գյուղը գտնվելիս է եղել այժմյան գյուղի կենտրոնական հատվածում։
Երկրորդ բնակեցումը եղել է 1828թ-ին։ Բնակչությունը ներգաղթել է ռուս-պարսկական պատերազմի տարիներին Պարսկաստանից, հիմնականում Խոյ, Սալմաստ, , Վանից Մակուից , Սասունից, Նախիջևանից։

Աղավնաձոր գյուղի շրջակայքում եղել են բնակավայրեր, դրանք են՝ Ապանան, որը գտնվում է գյուղից մոտ 4կմ հյուսիս արևելք, Բաղչաջղը՝ գյուղից մոտ 3կմ հյուսիս արևմուտք, Ղզլաղլը, Միրաշը։ Այդ տարածքներում գտնվել են կահ-կարասիներ, խաչքարեր փոքրիկ քանակով, գտնվել են նաև կարասային թաղումների շրջանի մնացորդներ (մ.թ.ա. II)։

Գյուղից մոտ 4կմ դեպի հյուսիս գտնվում է Ժամիդուզ կամ Ուլգյուր գյուղատեղը , որտեղ մինչև այժմ կանգուն են մնացել Աստվածածին եկեղեցու պատերը (վերանորոգվել է 2004թ.), որի շրջապատում կա գերեզմանոց, կանգուն խաչքարեր, որոնք մահարձաններ են։ Նրանցից մեկը պատկանում է Սարգիս Երեցին։ Գյուղատեղում կա երկու գերեզմանոց, որոնցից փոքրը պատկանում է 10-14-րդ, իսկ մեծը՝ 15-18-րդ դարերին։

Ուլգյուր գյուղում է ծնվել միջնադարի մեծ նկարիչ, ճարտարապետ, քանդակագործ Մոմիկը, որի ձեռքի գործն է Նորավանք վանական համալիրը, շատ այլ վանքեր
ու մատուռներ, այդ թվում՝ Ուլգյուր լեռան ստորոտում գտնվող սբ. Աստվածածին եկեղեցին։ Գյուղատեղի գերեզմանատանը պահպանվում է Մոմիկի որդու՝ Ասկանդրի խաչքարը։ Իսկ Աստվածածին եկեղեցու բակում գտնվել է Մոմիկի մոր և քրոջ գերեզմանները։
Գյուղի կենտրոնում գտնվում է սուրբ Մարիամ եկեղեցին, իսկ շրջակայքում բազմաթիվ խաչքարեր և մատուռներ։

Գյուղն ունի զարգանալու մեծ հնարավորություններ, ինչի համար կարևոր նշանակություն կունենա պատմամշակութային և էկո տուրիզմի զարգացումը։

Գյուղում գործում է մեկ միջնակարգ դպրոց՝ երկու մասնաշենքով, մանկապարտեզ, արվեստի դպրոց, բուժկետ, մշակույթի տուն, կապի հանգույց: